ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱԳԱ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօրվա որոշումներն ազդում են ձեր երեխայի ապագայի վրա

Կան բազմաթիվ հրաշալի ծրագրեր, որոնք կարող եք կազմել նախքան երեխա ունենալը: Բայց դուք նաև կկանգնեք շատ կարևոր որոշումների առջև: Ձեր երեխան կարող է ծնվել այնպիսի հիվանդանոցում, որը հաստատված է Կալիֆորնիայի Նորածինների լսողության սկրինինգի ծրագրին (NHSP) մասնակցելու համար: Հիվանդանոցում գտնվելու ընթացքում ձեզ հնարավորություն կընձեռվի տուն գնալուց առաջ ստուգել ձեր երեխայի լսողությունը:

Քանի որ լսողության կորուստը կարող է անտեսանելի լինել, կարևոր է ձեր որոշումը՝ ձեր երեխայի լսողության ստուգում անցկացնելու վերաբերյալ: Այժմ տեխնոլոգիան հնարավորություն է տալիս հայտնաբերել լսողության կորուստը երեխայի կյանքի վաղ օրերին:

Երեխայի կյանքի առաջին ամիսներն ու տարիները շատ կարևոր են հաղորդակցման հմտությունների զարգացման համար: Լսողության կորուստ կամ խլություն ունեցող երեխան կարող է դժվարություններ ունենալ նորմալ լեզվական հմտություններ զարգացնելու հարցում կամ կարող է լավ չսովորել դպրոցում: Ահա թե ինչու է կարևոր վաղ հայտնաբերել կորուստը և հատուկ ծառայություններ մատուցել երեխային ու ընտանիքին:

Ամերիկյան մանկաբուժության ակադեմիան և այլ մասնագիտական կազմակերպություններ խորհուրդ են տալիս լսողության ստուգում անցկացնել բոլոր նորածինների համար և խրախուսում են երեխաների լսողության մանրակրկիտ մոնիթորինգը վաղ մանկության տարիներին:

Քանի՞ նորածին ունի լսողության կորուստ:

Լսողության լուրջ կորուստ հայտնաբերվում է 1,000 նորածիններից 2-4-ի մոտ: Լսողության կորուստ ունեցող նորածինների մոտ 50%-ը չունի որևէ հայտնի նշան կամ ռիսկի գործոններ, ինչպիսիք են լուրջ հիվանդությունը կամ խլության ընտանեկան պատմությունը: Որոշ նորածիններ կարող են լսողության կորուստ զարգացնել կյանքի ուշ շրջանում՝ կրկնվող ականջի վարակների, մենինգիտի, գլխի վնասվածքի կամ այլ

բժշկական խնդիրների պատճառով: Երբեմն նորածինները կորցնում են լսողությունը, և պատճառը երբեք հայտնի չէ:

Ինչպե՞ս ենք լսողության սկրինինգ անցկացնում:

Նորածնի լսողության սկրինինգը տեղի է ունենում նախքան դուք և ձեր երեխան հիվանդանոցից դուրս գրվեք: Սկրինինգը տևում է ընդամենը մի քանի րոպե, մինչ ձեր երեխան քնած է: Մեղմ ձայներ են հնչում հատուկ նորածինների համար նախատեսված ականջակալներով: Ձեր երեխայի ձայնի նկատմամբ արձագանքն ավտոմատ կերպով չափվում է Օտոակուստիկ ճառագայթումների (OAE) կամ Ուղեղի ցողունի լսողական արձագանքի (ABR) միջոցով: Դուք կստանաք սկրինինգի արդյունքները նախքան հիվանդանոցից դուրս գրվելը: Այսօրվա հեշտ սկրինինգի մեթոդները շատ հուսալի են: Հազվադեպ է պատահում չհայտնաբերել երեխայի լսողության կորուստը:

Ո՞վ է վճարում լսողության սկրինինգի համար:

Ապահովագրությունը սովորաբար ծածկում է նորածնի լսողության սկրինինգի արժեքը: Medi-Cal-ը կվճարի որակավորված նորածինների սկրինինգի համար:

Ի՞նչ է Կալիֆորնիայի Նորածինների լսողության սկրինինգի ծրագիրը:

Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչության (DHCS) Մանկական բժշկական ծառայությունները (CMS) ունեն նորածինների լսողության սկրինինգի ծրագիր ամբողջ նահանգով մեկ: Ծրագիրն օգնում է հայտնաբերել նորածինների մոտ լսողության կորուստը և կարող է ընտանիքներին ուղղորդել հաղորդակցման հմտությունների զարգացմանը նպաստող համապատասխան ծառայություններին:

Կալիֆորնիայի Նորածինների լսողության սկրինինգի ծրագրի նպատակն է հայտնաբերել լսողության կորուստ ունեցող նորածիններին և կապել նրանց ծառայությունների հետ մինչև վեց ամսականը: Ծրագիրն ունի լսողության համակարգման կենտրոններ, որոնք համագործակցում են ընտանիքների, առողջապահական ծառայություններ մատուցողների և հիվանդանոցների հետ՝ օգնելու համար, որ երեխաները ստանան անհրաժեշտ ծառայությունները:

Նորածնի լսողության սկրինինգի ծրագիրը հավաքում է տեղեկություններ ձեր երեխայի լսողության սկրինինգի վերաբերյալ՝ համաձայն Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 124119 բաժնի: Լսողության համակարգման կենտրոնները կարող են օգտագործել այս տեղեկատվությունը՝ ձեզ և ձեր երեխային

անհրաժեշտ ծառայությունները ստանալու հարցում օգնելու համար: Հնարավոր է, որ Լսողության համակարգման կենտրոնը կապվի ձեզ հետ հետագա ծառայությունների վերաբերյալ:

Եթե ունեք հարցեր կամ ցանկանում եք ավելին իմանալ Նորածինների լսողության սկրինինգի ծրագրի մասին,

- Զանգահարեք 1-877-388-5301 անվճար հեռախոսահամարով
- կամ այցելեք մեզ www.dhcs.ca.gov/services/nhsp հասցեով: